Յայլի ծաղիկ Գյուլի ջան

Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա:

Մի յար ունեմ, անուշ ա,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Անուշ ա, թառլան ղուշ ա,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան:

Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա:

Զուն եմ, զուկամ սարերուն,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Հալիմ, թափիմ քարերուն,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան:

Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա:

Պարտեզ ունիմ, դրախտ ա,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Խաղիկ, ծաղկունքի վախտ ա,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան:

Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա:

Հենց որ ծագի արևը,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,

Քեզի ղրկեմ բարևը,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան:

Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա:

Վըրան եմ զարկե դարին,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,
Պայման եմ դըրե տարին,
Յայլի ծաղիկ Գյուլի ջան,

Կարմիր քարը տաշած ա,
Բոյդ վրեն քաշած ա: